

N 22-32
12.04.2022

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Կարեն Անդրեասյանին

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Անդրեասյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները (այսուհետ՝ Խումբ) 2022թ. ապրիլի 7-ին ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ տեսակցել են ազատագրված մի քանի անձանց.

1. Գեղամ Մելիքյան


Խմբի անդամներին Գեղամ Մելիքյանը տեղեկացրել է, որ ունի ատոլջական մի շարք խնդիրներ՝ էպիլեպսիա, էպիդոզային գեներալիզացիա, ռաբդոմիոլիզ, վարիկոզ, վարիկոցել և հոգեկան ատոլջության հետ կապված բազում խնդիրներ: 2022թ-ի մարտի 18-ին ունեցել է նոպաներ, որի համար տեղավախել էն ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, իսկ մարտի 22-ին վերադարձրել էն ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ: Շուրջ մեկ ամիս է, ինչ դեղորայք չեն տրամադրում: Բժիշկը եզրակացություն է տվել, որ անձի վիճակը լավ է, դեղորայքի կարիք չունի, սակայն իր ինֆրագացությունը լավ չէ, զգում է, որ ունի խնդիրներ և անհրաժեշտություն կա դեղորայք ընդունելու: Վարիկոզի և տրոմբի խնդիրների հետ կապված՝ նեւց, որ ՔԿՀ-ում հայտնել է այդ խնդրի մասին, սակայն որևէ հետազոտություն չի անցել և բուժում չի ստանում:

Խնդիրները ֆննսրկվել են Քրեակատարողական բժշկության կենտրոնի «Արմավիր» ստորաբաժանման աշխատակիցների և դեկավարի հետ: Վերջիններս նեւցին, որ հոգեբույժը զննել է Գ.Մելիքյանին և գտել է, որ անձը այլևս կարիք չունի բուժման, իսկ անձի այդ պահվածքը պայմանավորված է իր հոգեվիճակով և պահման ռեժիմով: Վարիկոզ հիվանդության վերաբերյալ անձի բժշկական փաստաթղթերում ոչ մի նեւում չգտան: Միևնույն ժամանակ խոստացան, որ կկազմակերպեն Գ.Մելիքյանի բժշկական հետազոտությունը:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք կազմակերպել Գեղամ Մելիքյանի հետազոտումը այլ հոգեբույժի կողմից, ինչպես նաև հետամուտ լինել վերջինիս պատեան բժշկական հետազոտությունը և բուժումը կազմակերպելու հարցում:

2. Արմեն Ումուրեատյան

Խմբի անդամներին Ա.Ումուրեատյանը հայտնել է, որ խցում գտնվում են 4 հոգով, որոնցից մեկի՝ Մուսեղ Պողոսյանի հետ մետապես ունենում են խնդիրներ (Մուսեղ Պողոսյանի հետ ունեցած խնդիրների մասին բարձրաձայնել է նույն խցի այլ ազատագրված անձ ևս), ինչը պայմանավորված է Արմեն Ումուրեատյանի գենդերային ինֆուրյամբ (Նշված անձինք գտնվում են նույնասեռական անձանց պահման համար նախատեսված խցում): Իրենց խցակիցը պարբերաբար ատելության կոչեր է հնչեցնում Ա.Ումուրեատյանի հասցեին, ծաղրում է, հեզնում իսկ մասնաեեհում վերոնեյալ անձանց վերաբերյալ



խոսակցություններ է տարածում, ինչով ոտնահարում է խցակիցների արժանապատվությունը և խնդիրներ ստեղծում մասնաշեղջուր գտնվող այլ ազատազրկված անձանց հետ: Բացի դրանից Մուսեղ Պողոսյանը չի պահպանում հիգիենայի կանոնները: Վերջինս նաև տեղեկացրել է, որ մի ֆանի անգամ դիմել են վարչակազմին Մ.Պողոսյանին այլ խուց տեղափոխելու կամ իրենց առանձնացնելու համար՝ թեև մտադրության հիմնով, սակայն չեն տեղափոխել: Տեղեկացրել են, որ ևս մեկ ամիս սպասեն, ֆանի որ Մուսեղ Պողոսյանի վիճակը կայացված է և նա պետք է տեղափոխվի:

Ա.Ունուբատյանը նաև հայտնել է, որ շուրջ մեկ տարի առաջ ֆրեակատարողական հիմնարկ ընդունվելիս հետազոտվել է ՄԻԱՎ-ի նկատմամբ արագ թեստով, սակայն իրեն այդպես էլ պատասխանը չեն ասել: Նաև երկու շաբաթ առաջ արյան ընդհանուր հետազոտություն է անցել, սակայն մինչ օրս պատասխանները նույնպես չեն հայտնել:

Հարցը ֆեննարկվել է Քրեակատարողական բժշկության կենտրոնի «Արմավիր» ստորաբաժանման աշխատակցի հետ, վերջինս հայտնել է, որ եթե հետազոտությունների արդյունքում անձի մոտ որևէ լուրջ բան չի հայտնաբերվում, կարիք չեն գտնում անձին տեղեկացնելու:

Միևնույն ժամանակ ցանկանում ենք նշել, որ Ա.Ունուբատյանի արյան հետազոտությունների արդյունքում բժշկական ֆարսի մեջ նշված էր, որ բուժում է նշանակված, սակայն անձը այդ մասին տեղյակ չէր:


Վերագրյալի հիման վրա առաջարկում ենք անվտանգությունից և հնարավոր կոնֆլիկտներից խուսափելու նպատակով ֆեննարկել Մուսեղ Պողոսյանին այլ խուց տեղափոխելու հարցը, ինչպես նաև Արմեն Ուրումեատյանին տեղեկացնել իր բժշկական հետազոտությունների արդյունքների մասին:

Որպես ընդհանուր խնդիր առաջարկում ենք Քրեակատարողական բժշկության կենտրոնի «Արմավիր» ստորաբաժանման աշխատակիցներին պարզաբանել ազատազրկված անձանց բժշկական հետազոտության արդյունքների մասին իրազեկման անհրաժեշտությունը՝ անկախ արդյունքներից:

Վերջին շրջանում Խումբը բազմիցս բողոքներ է ստացել ՀՀ ԱՆ «Արմավիր» ֆրեակատարողական հիմնարկի ազատազրկված անձանց կողմից ոչ պատշաճ բժշկական օգնություն ստանալու վերաբերյալ: Կարևոր ժամանակահատվածում առողջության հետ կապված բազմաթիվ ահազանգերը և Խմբի ուսումնասիրությունները հիմք են հանդիսանում եզրահանգելու, որ Քրեակատարողական բժշկության կենտրոնի «Արմավիր» ստորաբաժանումը թերանում է իր աշխատանքում: Այս կապակցությամբ հրավիրում ենք Ձեր հասուկ ուշադրությունը Քրեակատարողական բժշկության կենտրոնի «Արմավիր» ստորաբաժանման աշխատանքները կանոնակարգելու և վերանայելու ուղղությամբ:

Որպես ՀՀ ԱՆ «Արմավիր» ֆրեակատարողական հիմնարկի հետ կապված ընդհանուր դիտարկում ցանկանում ենք նշել, որ Խմբի այցի ընթացքում արձանագրվել է, որ հիմնարկի ֆեննարկի սենյակներից դուրս նայող բակային տարածքը ամբողջությամբ աղտոտված էր սննդի պլաստմասե տարաներով և հացի մնացորդներով: Ընդհանուր առմամբ՝ տարածքը վերածվել է աղբավայրի, քնապահպանական նորմերը լիովին խախտված են: Ենթադրելի է, որ տվյալ տարածքը տաք եղանակի ընթացքում կպատվի նաև գարշահոտով:

Հարգանքով՝



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱԿԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԵՐԻ ԽՈՒՄԲ

Խմբի նախագահ

Զարուհի Հովհաննիսյան